Հավելված N 5
ՀՀ կառավարության 2021 թվականի
փետրվարի 4-ի N 142 - Լ որոշման

ԿԱՐԳ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԾԱԳԱՆՔՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ կառավարության տնտեսական արծագանքման ծրագրի իրականացման նկատմամբ ընթացիկ մոնիթորինգի և հաշվետվողականության հետ կապված հարաբերությունները:
2. Ծրագրի մոնիթորինգն ու հաշվետվողականությունն ապահովվում է **առաջընթացի հաշվետվության** և **արդյունքների ամփոփիչ հաշվետվության** միջոցով:
3. Առաջընթացի հաշվետվության նպատակը Ծրագրի միջոցառումների կատարման նկատմամբ ընթացիկ վերահսկողությունն է և խնդիրների արդյունավետ գործառնական կառավարումը: Առաջընթացի հաշվետվությունն ունի ամսական պարբերականություն և վարվում է՝ հիմք ընդունելով Աշխատանքային ծրագիրը:
4. Բոլոր միջոցառումների պատասխանատուները՝ անկախ դրանց համար աշխատանքային ծրագրով սահմանված ժամկետից, մինչև հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը գործողությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն են ներկայացնում ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակ՝ համաձայն սույն հավելվածի Ձև 2-ի: Ըստ նպատակահարմարության առաջընթացի հաշվետվության համար կարող է ձևավորվել թվային հարթակ:

Ձև 2. Առաջընթացի հաշվետվություն

Ուղղություն _____

Միջոցառում/ աշխատանք	**Կարգավիճակ**	**Առաջիկա անելիքներ**	**Ժամանա-կացույց**	**Առկա խնդիրներ**	**Լուծման առաջարկներ**	**Այլ առաջար-կություններ**
...						

5. ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակը 2-օրյա ժամկետում 4-րդ կետով սահմանված կարգով տրամադրված տեղեկատվության հիման վրա կազմում է Առաջընթացի հաշվետվություն: Փոխվարչապետը զեկուցում է վարչապետին Ծրագրի կատարման մասին:
6. Ամփոփիչ հաշվետվության նպատակը Ծրագրի իրականացման արդյունքների վերաբերյալ հանրային հաշվետվողականությունն է՝ հիմք ընդունելով Ծրագրով արդյունքային շրջանակով սահմանված արդյունքները և թիրախները: Ամփոփիչ հաշվետվությունը կազմվում է 1 անգամ՝ Ծրագրի ավարտից հետո: Ամփոփիչ հաշվետվության մեջ ներառվում է նաև տեղեկանք Ծրագրի արդյունքային շրջանակի ամփոփ կատարողականի վերաբերյալ՝ ըստ Ձև 3-ի:

Ձև 3. Տեղեկանք Ծրագրի ամփոփիչ կատարողականի վերաբերյալ

Ուղղություն/ Միջոցառում	**Արդյունքային ցուցանիշը**	**Թիրախը**	**Փաստացի արդյունքը**	**Կատարողականի գնահատականը, %**	**Մեկնաբանություններ**
...					

7. Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակը պատասխանատու է ամփոփիչ հաշվետվության նախագծի մշակման համար՝ համակարգելով միջոցառումների կատարման համար պատասխանատուների հետ աշխատանքը: Ամփոփիչ հաշվետվության նախագիծը քննարկվում է ՀՀ վարչապետի մոտ և մինչև 2021 թվականի հուլիս ամսվա ավարտը հրապարակվում է ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

09.02.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ